11. ԱՀՄԱՏԵ ՔՅԱՄԱՆՏԱՐ

Կէղնի, չէղնի տղեմ կէղնի, անուն Ահմատե Քյամանտար կէղնի։

Էդ տղեն կհ'ելնի աչք կթալե դեղի ռեսի ախչիկ։ Ինչ կէնե, չէնե ռես զուր ախչիկ չի տա։

Կհ'ելնի զուր սիհլեն կկապե վրեն, կանի դեղեն դուրս. նախիր կհ'ելնի չթողե, ոչխար կհ'ելնի չթողե, լուծք կհ'ելնի չթողէ, մարթ չթողե դեղեն դուրս հ'ելնի։ Որն օր կհ'ելնի՝ ետ կդարձու։

Կասե.— Գացեք ըղռեսի ախչիկ հ'ուզեք ընձիկ, օր թողիմ հ'ելնիք դեղեն դուրս, թը չէ, մարթ չըմ թողի հ'ելնի դուրս։

Գեղացիք ջանդարդի կէղնին, կհ'ելնին էրթան ռեսի մոտ, կասին. «Էկո զքու ախչիկ տուր էտա տղին, թողե զմըր տավար, լուծք հ'ելնին դեղեն դուրս»։

Ռես էլ ղգեղացոց խաթր չկոտրե, կհ'ելնի զուր ախչիկ կիտա էդ տղին։

Ահուն (վախտ) օր կիտան, կառնե կէրթա։ Ահմատե Քյամանտարն է հ'ըմնօր ավխուշի կէրթար։ Ը օր զէդ ախչիկ բերեց, հ'ըմնօր հ'իրկուն կկանգնցներ դուռ, կզարկեր նշան, ախչկա քթի վրավու խզմի ծրկով կընցուցներ ու կդառներ ախչկան կասեր.

— Հ'իսնե կտրիճ, նշնտար մարդ է՞լ տեսեր իս, թե օր տեսեր իս, լսեր իս, ընձիկ ասե, էրթամ վրեն։

Կնիկ կասե.— Մա՛րդ հերք է զէդա էնիս իմ գլուխ, քու վրեն կտրիճ ու թախրտով մարդ հ'ուստ է, օր ես ասիմ քզիկ էրթաս վրեն, կրսիս։

Էդ ախչիկ Ահմատե Քյամանտարի հ'ախուն էղեր էր ասղուն օղցի ծակ կէրթեր, հրմալ օր բարկըցեր էր։

Ավուրըմ մեկ ախչկա մեր էկավ օր զուր ախչիկ տեսներ, տեսավ չճանչցավ, հըմալ օր փոխվեր էր։

Ասեց.— Ախչի լաո՛, էդ ի՞նչ ձեռք տվեր է քզիկ, օր հըմլա էղեր իս, անոթի՞ իս, ծարա՞վ իս, հալպաթ բանմ էղեր է։

Ախչիկն ասեց մամուն.— Ալ ու քեֆյաթն հըմալ է. հ՚իրկուն օր կդառնա կիդա տուն, կբերե զիս կանկցու դռան հ՚առջև, կզարկե նշան քթիս խղմի ծրկով կընցունե ու կդառնա կասե. «Կնիկ, հ՚իսնե կտրիճ նշնտար մարդ կա՞, ասե, էրթամ վըր ընտոր կռիվ»։

Մամն ախչկան սորվըցուց, ասեց.— Էդա հեղ օր էկավ, կանկըցուց զքզիկ ու նշան զարկեց, ասեց. «Հ՚իսնե կտրիճ մարդ կա՞», դու լէ ասե. «Մարդ, ես քզիկ չըմ խիմիշի, մարդ օր կա Փառե Դաշտեն էր»։

Փառե Դաշտեն դեվ մըն էր։

Ահմատե Քյամանտար հ՚իրկուն օր դարձավ էկավ ավուխուշից, կանկցուց կնիկ դռան հ՚առջև, զարկեց ու ասեց.

— Կնիկ, հ՚իսնե կտրիճ մարդ կա՞ աշխըրքիս մեջ։

Կնիկն ասեց.— Մարդ օր կա Փառե Դաշտեն է, դու ի՞նչ մարդ իս, ես քզիկ չընք խիմիշե հար էսօր ասենք։

Էդ տղեն վերուց կնկան ասեց.— Կնիկ, ուխտ ու խրատ էղնի իմ հոգուն, ես պիտի էրթամ Փառե Դաշտեն սպանիմ, զէնտոր ջապիկ առնիմ հ՚իգամ։

Հ՚ելավ լուսուն, բարըմնա էղավ կնկա մոտեն, կապեց զուր սիհլաներ վրեն, հաց մը լէ զարկեց մեջք ու հ՚ընկավ ճամրախ։ Շատ դնաց, քիչ գնաց, հ՚ըռաստ էկավ գեղիմ, տեսավ օր էդ գեղի տղեկները տասնուհինգ հոդի մեկ դին կանուկ ին, կխաղան, տասնուհինգ հոգին լէ մեկ դին։

Էդ տեխ օր հոլ կխաղեն, մեկ լէ տեսան արջ թալեց գեղի օչխրի մեջ, էն տղեն օր հոլն կզարկեր, թողեց ըղհոլ, առավ զուր փետն ու հասավ արջ, արջուն օր մոտեցավ, փետըմ հա՛յ հա՛յ արջու ղըլուխ, շրջեց գետին ու ձեռք թալեց բերան, էրեց էրկու կտոր, մինակ արջ քիչըմ զտղի ձեռք ճանկռտեց։

Ահմատե Քյամանտարն զէտ օր տեսավ, հարցուց Ֆըլան տղի պապու տուն հ՚ու՞ր է։ Գնաց հոն մսաֆիր էղավ։ Էղ տղի պապ հարցուց Ահմատե Քյամանտարից.

— Մարդ, դու ինչ՞ էրկրե իս, քու անուն ինչ՞ է։

Ահմատե Քյամանտարն ասեց.— Ես Ֆըլան էրկրեն իմ, իմ անուն Ահմատե Քյամանտար է։

Էդ տղի պապն ու Ահմատե Քյամանտար նստած են մժուլի

կէնին ուրանց։ Մեկ լէ տեսան էն տղեն օր արշ սպաներ էր, զուր փետ դրեր էր փեճին, էկավ մտավ ներս։ Տղեն օր էկավ, ձեռքն արնոտ էր, պապ տեսավ, հարցուց.

— Տղա, լաո՛, էդ քու ձեռքն ի՞նչ է էղի։

Տղեն ասեց.— Արշն էնեց հրմալ։

Քաշեց զդանակ, հասավ վրը տղին օր սպաներ, Ահմատե Քյամանտար հ՚ելավ հ՚առջև, չթողեց։

Ասեց տղին.— Դու էղնիս իմ տղեն, կատուն զքու ձեռք փանճի, դու էլ հ՚որի՞ սաղ կմնաս։

Ահմատե Քյամանտար վերուց ասեց.— Ախպե՛ր, մարդ սիլահով չկռնա ըշե վրը արջուն, էդ տղեն տրսնուհինգ տարեկան, քշեց վրը արջուն, էրեց էրկու կտոր, էն լէ փետով, ո՞ր զէդ բան կէներ։

Մարդն վերուց Ահմատե Քյամանտարին ասեց.— Կանի, դիմ գլխու դալած նախբլ էնիմ քզիկ, սորա, ինչ դինաս ասե. հալպաթ ես բանըմ զինենք օր ասի. իմ տղեն էղնի, արջ պետք չէ փանճի զձեռք։

Ըդհաղուն մարդն ասեց Ահմատե Քյամանտարին.— Մըր էրկիր հավտարըմ փեյտա էղեր էր, գերեզմներուց կհաներ մեռել, կուտեր։ Իմ պապ օր մեռավ, Ահմատե Քյամանտա՛ր, դլխուտ արևուդ մեռնիմ, ընծի ասեց. «Իրեք օր կպահիս դիմ գերեզման, օր հանեց, հանեց, չհանեց, էլ չկրնա հանեն»։ Ես գացի զիմ պապու գերեզման պահեցի, մեկ լէ իշքիմ՝ հավտար էն դիեն էկավ, մեկ ձեռք բահն էր, մեկն էլ փետատ։ Էկավ մոտեցավ գերեզմնին, փորեց զդերեզման օր հաներ զիմ պապ, ուտեր, ես մեկ թրֆանք զարկի էտոր։ Մութ գիշեր էր։ Արուն թափավ ու փախավ, ես լէ առի արնի ըռեճ ու գացի։ Գացի տեսա օր գնաց էրրմ (քարայր) մտավ, ես լէ հ՚ետևեն մտա, քանի ըզքիֆրիթ զարկեցի, իսնի ճիլով զարկեց ըզքիֆրիթ հ՚ընցուց։ Ինչ օր էրեց իմ ձեռքեն չազատավ. մութրնվեր գաշեցի գտա, քաշի հանի դուրս։ Դուրս օր հ՚ելանք, ձեռք թալինք հ՚իրար ու էկանք գուլաջ։ Շատ տարանք զիրար բերինք, ես վերցի ըզհավտարն ու զարկի գետին։ Զարկի գետին, քաշի զխանջալն օր սպանենք. ի՞նչ վերու ասե, ընձիկ աղեկ է։ Ասեց. «Մարդ, քու բախտն իմ հ՚ընկի, ընծիկ մ՚սպանի, ես կնիկ արմատ իմ»։ Հավտարն օր ասեց. «Կնիկ մարդ իմ», էլ ձեն չհանի, բռնի ձեռքեն. առա էկա մըր տուն, էրի ընձիկ կնիկ. էդա տղեն լէ, էդ կնկած է։

Ըստաղ կնիկ վերուց ասեց.— Ահմատե Քյամանտար, դըլխուդ արևուդ մեռնիմ, գլխացավանք չէղնի, իմ մարդն զուր դլխու գալածն պատմեց, ըստհաղ դոր էկավ ընծիկ։ Ես տրսնուհինգ տարեկան ախ-

չիկ ենք, օր տարան իրկան։ Տարան վել հասըլ հարսնիք էրին, պսակեցին։ Եբ օր տարան զիս կմեկտեխեն (առաջաստի գիշեր), ձեռք օր թալե իմ վիզնվեր, կխնտանենք վրեն, մեկ լէ տեսա գլուխ ձեռքիս հետ փրցավ էկավ։ Էդոր վրեն տեսա օր իմ նշանլուի վիզ փըրցավ էկավ, ասի. «Ուխտ էղնի պիտի էղնիմ գազան ու հ'ընկնիմ էրկրի մեջ, որն օր զիս ալթ էրեց, նոր էնտոր կէղնիմ կնիկ»։ Հ'ընկա սար ու ձոր, գերեզմներ, ու ինչ մեռել տեսա, հանի բերի ու կերա։ Էդ հ'ըմնուց սորա, իմ առածի պապ մեռեր էր, էկա օր հանենք տանենք ուտենք, իմ առած հ'ընկավ իմ հ'ետևեն, էկավ հասավ, ալթ էրեց, ու առավ էկավ էրեց ընծիկ ուրին կնիկ։ Հըմկա, էդա տղեն օր հ'իսնե ու էդա մարդուց էղեր է, պե՞տք է օր արջ զէդոր ձեռք պըրինտրե։

Կնիկն ու մարդ զուրանց գլխու դալածն օր նախըլ էրին, խըլսան, գարձան ասին.

— Ահմատե Քյամանտար, էնի խուրպան թըղ էղնի քզիկ, տըվինք քու խաթըր, թե օր դու չէղներ, մենք զինենք իմալ կէնենք։

Էդ օր հըմալ ասին, Ահմատե Քյամանտար հոգուցու հետ հառչաց ու ա՞խըմ քաշեց։

Վերցին ասին.— Ահմատե Քյամանտար, զօղորդ կասիս, դու հ'որի՞ ախ քաշեցիր։

Ահմատե Քյամանտար վերուց ասեց.— Ձենե պահեմ, աստըծուց ի՞նչ պահեմ, ես էկեր իմ օր էրթամ Փառե Դաշտեն սպանիմ, զձզիկ օր տեսա, սիրտս խարփալավ, էկեք զօղորդն ասեք՝ Փառե Դաշտեն դուք չե՞ք։

Մարդն վերուց ասեց.— Տնաշեն, ես հողածին մարդ իմ, իմ ուժ անձի ուժ է, Փառե Դաշտեի հետ ես չըմ կռնա կռվի, էդ մնաց դու, էնի օր իգա մըր հ'առեջ, մըր օտք ու ձեռք կապուկ է, մենք չընք կռնա կռիվ էնի, կէրևա դու կնկա խաբուկ իս, էդ սավդից վազն արի, էկո դառձի, գնա ետ։

Հացի թատարուկ տեսան օր Ահմատե Քյամանտար ուտեր, մեկ լէ տեսան՝ դուռըմ բացվավ ու կնիկմ էկավ ներս, ասեց.

— Հարի իմ գլխու գալած խըսա չէնիմ, գուք հաց չկառնաք ուտիք։

Վերուց մարդ.— Ահմատե Քյամանտար, գիշեր հ'երկեն է, բաշա կյալղուզիե նախըլ կէնինք։ Ես հ'ավալ տասնուհինգ տարեկան ենք, գողություն կէնենք, հմալ գող ինք օր իմ գանկու թայ չկեր։ Էկան ընձիկ ասին՝ «Ցլան մարդուն փարա շատ կա»։ Մենք վեց հ'ընկեր ենք, հ'իսնով յոթ, հ'ելանք գացինք էդ մարդու տուն

գողութենի։ Գացինք օր քիչըմ էդ մարդու տան մոտեցանք, էդ մարդ հ'ելավ մըր հ'առջև, ասեց. «Ախբրտանք, դուք ի՞նչ մարդ իք, ընծիկ կերևա դուք դող մարդ իք», ասեց՝ «Օր դուք գող մարդ իք, ես գինամ ֆուխարա իք լէ, յոթ եզ հանդե քշեք տարեք ձզիկ, կերեք». յոթն եզ օր առանք էկանք, հասանք չոլ տեխ մը, մենե մեկ վերցուց ասեց. «Ջանըմ, մենք յոթ եզն ի՞նչ կէնինք, էն մարդ մեկ մարդ էր, մենք յոթ, վախեցանք յոթ եզն առանք էկանք։ Թողեցինք էդ յոթ եզն էնտեխ, մեկ լէ դառձանք էկանք։ Էդ մարդ հ'իմացեր էր, քուն չուներ, հ'ելավ էկավ մըր հ'առեջ. «Ախբրտանք, մեկ լէ հ'որի՞ն էկաք, էն յոթ եզ հերիք չէ՞ր ձըզի»։ Հ'ելավ յոթ եզ լէ տըվեց, ասեց. «Առեք գացեք, բայց հեղ մը լէ չի գաք, հ'իգաք, շատ կվնասվիք»։ Մենք լէ առանք յոթ եզն, օր էկանք դաշտ, վերցին ասին. «Ջանըմ, էդ ի՞նչ մարդ է, օր զմըզիկ էղավ էրկու հեղ կխաբե, ճամբու կդնե, մենք էկեր ինք փարի համար, ըղեղն ի՞նչ կէնինք։ Քելեք էրթանք, քշինք էդ մարդու վրեն, զինք սպանինք, ինչ օր կա ժողվինք, առնինք գանք»։ Ահմատե Քյամանտար, պոյիդ ու պուսաթիդ մեռնիմ, մենք օր գացինք հասանք, մեկ լէ տեսանք էդ մարդ լցվավ ու էկավ մի, բռնեց զյոթս լէ կապեց, մենք չկոցանք օր ճկթուն լէ հանենք։ Բահ ու փետատ տվեց մըր ձեռք, տվեց զմըզիկ հ'առեջ, առավ էկավ դաշտ, ուր մըլքի գլուխ ու ասեց. «Ջէդա տեխ փորեք». յոթ հոր տվեց փորել մզիկ, բերեց հորեց հար գլուխ սաղ, սաղ ըզդլուխ մի (մեր) մինակ թողեց դուրս։ Էդոր տաժիմ կեր (քերծե), անունը Տելազար էր, ասեց. «Տելազար, ես կէրթամ, դու դինաս ինչ կէնիս էդոնց գլուխ». թողեց գնաց։ Տելազարն է, էդ տեխ հ'ախբուր մը կեր, հ'ելավ զուր բերան տվեց չրակի դեմ, աղեկըմ լվաց, օր լվաց բանձրցավ քիչըմ վի ու էկավ, զարկեց զիմ հ'ընկերոջ վիզը կարեց ու տարավ դրեց ծառու տակ. էն տեխ ծառըմ լէ կար, ես ներքին ձեռքն ենք հորուկ, էնտոնք իմ վերևն են։ Ես ասի. «Հե՜յ վախ, էդ ինչե՞ր հ'ելան մըր գլուխ, վերջին տարով տաժով պիտի էրթա՞նք»։ Ես քիչըմ զիմ գլուխ կըզրցուցի, չանե։ մտուցի հողու մեջ։ Վեր հասըլ էդ տեսակով, էդի զիմ վեց հ'ընկերոջ գլուխ կտրեց, բերեց դրեց ծառի տակ։ Կարգն էկավ ընծիկ։ Ես ուժտան զիմ գլխու տեխ կշինիմ։ Եր էկավ դոր ընծիկ, ասի. «Տեր իմ աստված, զիս էդա տեխեն ազատիս, ուխտ ու խրատ էղնի, քանի սաղ իմ, թյուճար (բնավ) դողության անուն չիտամ, զարկե զիմ չանեն գետին, մինակ ծամերս հաշվե թե մնաց դուրս։ Մեկ լէ տեսնամ տաժին էկավ. էկավ օր զարկեց, զիմ գլուխ չկառցավ վերուց, պուզ տվեց իմ հ'առջև էկավ վըր դլխուն։ Թալի ըզբերանս,

աղեկըմ խաձի զէտոր անկաճ. ուր անկճի կսկծուն տաժին սազեց ուր թաթերով ուժտան փեքոլել իմ հառշև։ Հըմալ էղավ օր հող չմնա։ Հելա ղուրս, վերցի զպալտեն հա՜յ, հա՜յ տաժու գլուխ ու սպանեցի։

Զտաժին օր սպանեցի, տեսա էդ մարդ էն դիեն էկավ, ես տեսա օր մարդն էն դիեն կիդա, փախա հելա ծառ։ Մարդն օր էկավ մոտեցավ, ասեց. «Աճայիպ էդ իմ տաժուն ի՞նչ ձեռք տվեց օր հանգցավ, մինչև հիմա չէկավ»։ Էկավ իշքեց, տեսավ օր տաժին սպանուկ է, հընկուկ գետին։ Ասեց. «Ժը խերա խոտիռա[1] իմ մալ ու գոլվաթ էրթեր իմ ձեռքեն, իմ տաժուն բան չէղներ, հըմկա իմ տաժու սպանողն հընկներ իմ ձեռք՝ կտոր, կտոր էնենք, ընձիկ բան պետք չէր»։

Տեսավ օր էդ մարդ ծառու գլուխ նստուկ էր, քաշեց զթուրն ու դիմավորեցավ էդ մարդ։ Օր հելավ էդ մարդու խեչ, ըզթուրն քաշեց օր զարկեր, օտաց տկու ճուղ կոտրավ ու էկավ գետին, թուրն ընկավ պառեկի տակ, ինք լէ վըր թրին, թուր փորուց տվեց դուրս, մեռավ։

Աղոթրան բացվելու մոտ էր, մարդն ասեց. «Հըմկա կլուսնա, էդոնց գեղացիք գիկան տեսնան, իմա՞լ էնիմ, էտոր չարեն էն է, օր հագնիմ զէտոր հալավ, էրթամ ուր տուն, գալացող տեսնող գինա ուրանց աղեն իմ, բան չասե, հար հիրկուն իդա աշխարհ, հելնիմ թողնիմ էրթամ իմ տուն»։

Հելավ հագավ զէդ մարդու հալավ, դնաց էդոր հոդի գուռ հիջավ. խուլմըներ հելան հառշև, քաշեցին զձին կապեցին, գընաց ինք լէ տան դին ասեց. «Թալեք զիմ տեխն կպառկիմ, ես հիվանդ իմ»։

Գիշեր օր էղավ, էդ մարդու կնիկ էկավ էդոր խեչ։ Մարդութեն բռնեց ասեց. «Վահլլահի, ես պիտի հելնիմ էդա կնկա հետ խտամ ու առնիմ, կճանչնա, չճանչնա ուր քեֆ գինա, ինչ կէղնի, շուտ թըղ էղնի»։

Էդ օր հելավ մոտեցավ կնկան, ճանչցավ, ասեց. «Էդա իմ մարդ չէ». ձեռք թալեց էդ գող ջալաքնդեց ու բերեց, դրեց ուր կուշտ, ասեց. «Արի տեսնամ, դու իմ մարդ չիս, իմա՞լ իս էրի, զիմ մարդու շորեր հագեր իս էկի, ղողորդն ասա»։

Ասեց.— Կնիկ, քինե պահիմ, աստծուց ի՞նչ պահիմ, մենք յոթ հընկեր ենք, էկանք քու մարդու փարի գողութեն, քու մարդ բրռ-

---

[1] Աստծու ողորմածությամբ (Ծ. Կ.)։

նեց ըզմզրկ տարավ արտի մը գլուխ հորեց, ուրին տաժիմ կեր, անուն Տելաղար էր։ Ասեց· էգ տաժուն. «Ես կէրթամ, ի՞նչ գինաս էրեմ»։ Տաժին մեկ-մեկ զարկեց զիմ հ՚ընկերներու գլուխ կտրեց ու տարավ գրեց ծառու տակ։ Դորն էկավ ընծիկ, ես գընչով ըզհող փորեր ենք, ըզգլուխս մտուցի հողու մեջ, տաժին օր էկավ զարկեց, չքիսավ պուզ թազլա տվեց, կանավ հ՚առեշս, բռնի զտաժու անկաճ խածեցի, փորեց, զիս հանեց հորեն, հ՚ելա առա զպալտեն, զէդ տաժին սպանեցի։ Քիչըմ մանցինք, տեսա քու մարդն էկավ, եր տեսավ տաժին սպանուկ էր, ու ես լէ ծառի գլուխ, դիմեց ընծիկ օր սպաներ, ծառու ճյուզ կոտրավ ու հ՚ընկավ գետին, թուրն ուր տակ, ինք վրեն, թուր տվեց փորուց դուրս ու մեռավ, ասի, ի՞նչ էնիմ օր ազատիմ, հ՚ելա զքու մարդու շորեր հագա էկա, ասի ես ձըր աղեն իմ, զձիս քաշեցին ներս, ես լէ էկա հ՚ոդա պառկա։

— Մադամ օր դու զիմ մարդ սպանեցիր, հ՚ելի հրմկա զիս առ գնա, թը չէ, հար լուսուն օր մանցինք, իմ մշկներ հ՚ելան տեսան, կճանչնան օր ուրանց աղեն չիս, կզարկին սպանին զքզիկ։

Ելա առա ու էկա։ Զէդա կնիկ լէ հրմլա իմ բերի։

Դրին հաց օր ուտեն օղլուշաղրմ[1] լէ մտավ ներս, ասեց.— Հար զիմ գլխու դալածը չզրուցիմ, չըմ թողի հաց ուտիք։

Մեկ լէ վերուց մարդ.— Ահմատե Քյամանտար, իմալ օր խավըլ ու խրատ էրեր ենք զէդ գողութենի թարկ տվի, ասի հ՚ելնիմ էրթամ աշխատիմ, ըստհաղուն ընծիկ տուն ու տեխ դնիմ, հերք է հարամ հացի հ՚ետև հ՚ընկնիմ։ Շատ թե քիչ գացի, հ՚ըռաստ էկա ծովում, էնքան օր հ՚ելանք նստանք կյամին կընցնենք ծովու էն դին, կէրթենք աշխատելու։ Քամին հ՚ելավ լոտոզ էրեց, կյամին պաթմըշավ, էն աստված օր զուր ստեղծածն պահե, մարդու բերնին չհ՚ընկեր է, կորցու, իմ ձեռք հ՚ընկավ կտորըմ տախտակ. զիս թալի վրեն ու տաղլեն առավ ու գնաց։ Հ՚ու՞ր գացի, ես լէ չըմ դինա։ Աշխարքիմ էկավ տաժանմիշ էղավ իմ տախտակ, կէրթա ղարկն փլերուն ու կդառնա ետ. քաղա՞ք է, զե՞ղ է, քա՞ր է, ի՞նչ է չըմ գինա։ Մութ գիշերմ էր, մատ կոխեր մարդու աչք, չտեսներ։ Առավոտ օր լուս բացվավ հավթե ու դու միլաթի[2] վրեն, տեսա օր շորային էրկիրըմ էկեր է հ՚ելի դուրս իմ տախտակ։ Հ՚իջա տախտակի վրեն, հ՚ելա շոր։ Հ՚ըռաստ էկա լծքվորիմ օր մեկ հալվորմ է, լծեր է էրկու եզ ու վար կէնե։

---

1 Բն. օլուխ ուշաղրմ (Ս. Կ.)։

2 Յոթանասուներկու ազգերի (Ս. Կ.)։

Էդ լծքվոր օր զիս տեսավ, ասեց.— Տղա, լաո, դու իմա՞լ էղեր իս, էկի հ՚ընկի էդա տեղրանք, քու դլխու դալած ի՞նչ է։

Ասի.— Արո, աշխատելու կէրթամ, էկա ծովու պռուկ մտա կյամին օր հ՚ընցնենք էրթենք էնդին, կյամին պաթմիշ էղավ, ես դիս թալեցի վըր տախտկիմ, տաղլեք զարկին հանին հ՚ոտա դուրս։

— Լաո՛,— ասեց հալվորն ընծիկ,— մատամ օր աշխատելու կէրթաս, ընծիկ զավակ չկա, էկո, էղի ընծիկ տղա։

Ասի.— Դու օր խարուլ կէնիս, ես ի՞նչ պիտի ասիմ։

Հ՚ելա բռնի զմաճ բուռն, քանի մը փաթ գացի էկա լծքի հետ։

Քիչըմ մանցի, տեսա օր էդ հալվորու ախչիկ առավ հաց ու էկավ։

Հըմալ անոթցեր ենք, Ահմատե Քյամանտար, օր իսկի չէղեր էր։ Ձախչիկն օր տեսա, իշթես կապվավ, էնքան օր խորոտիկ էր, գինենք օչխարրմ ենք կէրի, թարկ տվի ու պշխլա զէդ ախչիկ իշքի։ Հաց չկերա, հալվոր կերավ։ Ե՞ր կերավ խըլըսցուց, ախչիկն առավ զամներ ու դառցավ տուն։

Ախչիկն օր գնաց, հալվոր վերցուց ընծիկ ասեց.

— Տղա, լաո՛, դու իմ ախչկա սիրուն հաց չկերար, ես գինամ, մանցիր անոթի, հըմկա ախչիկ գնաց, էկո քիչըմ հաց վերցեր իմ էդա տեխ, կի քզիկ հաց, հ՚ելնինք իշքինք մըր գործուն։

Վերցի կերա։ Հաց օր կերա խըլըսա, հալվոր վերուց ասեց.— Տղա, քու անուն ի՞նչ է։

Ասի.— Իմ անուն Ահլավերդի է։

Հալվորն դառձավ հ՚իսվե ու ասեց.— Ահլավերդի, ընծիկ իրեք ախչիկ կա, զէդ օր տեսար՝ հ՚ըմնու պզտիկն է։ Էկո՛, որ մեկին հավնար, առ, էդի ընծիկ տղա։

Հար հ՚իրկուն վարեցի, գացի լծքի հետն ու էկա, ասի հալվորին.— Հայտե, մատամ օր դու կասես, ես քզիկ տղա, դու ընծիկ պապ։

Կես օրին մոտեցավ, տեսա օր ախչիկ մեկ լէ առավ հաց ու էկավ։ Օր էկավ, հալվորն վերցուց ասեց.

— Էդ լէ իմ միջնեկ ախչիկն է։

Մեկ լէ իմ բերան հաց չգնաց ախչկա սիրու համար։ Ե՞ր հալվոր կերավ, խըլըսավ, ախչիկ առավ զամները դառցավ գնաց, հալվոր էմ լէ վերուց ասեց.— Ահլավերդի, խուրպան էղնիմ քզիկ, ես գինամ իմ ախչկա սիրու համար մեկ լէ դու հաց չկերար, էդի լէ իմ միջնեկ ախչիկն է։ Էկո, քիչըմ հաց վերցեր իմ, կի, ելնինք մըր վարն իշքինք։

Հալվորն մեկ լէ կասե.— Ահլավերդի, խուրպան էղնիմ քզիկ, հոկուց սորա մեկ ախչիկ լէ տուն կա, էնի հ՚ըմնու մեծն է, հ՚իրկուն օր գացինք տուն, վիրն օր հավնար, կիտամ քզիկ։

Վար էրինք, հար արև ռոհաթավ, լուծք հարձկինք, թալինք վըր էղներուն, քշինք գացինք տուն։ Տարա ղեզներ կապի թավլեն, դառցա էկա տուն նստա. տեսա օր իրեք քուր լէ ջերկովի նստեր ին. ալքս օր առավ էդ ախչրկները, աչքերս մթնեց, ձեռք ու օտքս թուլցավ, պաղա կանա, էլ չրնք դինե որն առնենք, որ թողենք։ Ասի. «Ես էմլէ պզտիկ ախչիկ պիտի առնիմ, հաց օր կա, հ՚առջին հացն է»։ Նստանք, բերին հաց կերանք։

Հալվորն ասեց.— Ահլավերդի, արևուդ խուրպան էղնիմ, դու ի՞նչ էրկրացի իս։

Ասի.— Աբո, դու իմ էրկրից ի՞նչ կուզիս, էն օր հըմկա հ՚ոդա իմ հելի դուրս։

Ասեց.— Ահլավերդի, իմ ախչկներուն կհավնի՞ս. օր կը հավնիս, հատըմ վերու քզիկ։

Ասի.— Ես քու պզտիկ ախչկան կհավնիմ, օր իտաս ընծիկ, կէղնիմ քզիկ տղա։

Ասեց.— Ահլավերդի, լաո՛, դինաս ինչ կա մըր աշխարհք, հ՚առջին հեղ ասիմ քզիկ, օր վերջ չասիս, թե իմ աներ չասեց ընծիկ։ Մեր էրկիր ատաթըմ կա, թե օր հ՚առջին հեղ կնիկ մեռնի, ըղիրիկ սաղ-սաղ կհորին էնտոր հետ, թե օր իրիկ մեռնի, ըզկնիկ կհորին, հըմկանե կասիմ քզիկ, օր հ՚իմնաս։

Վերցի ասի. «Աբո՛, թըխ էղնի, հըմկա իմա՞լ էնիմ, ես իմ կնկաց էվել իմ, պալքիմ աստված զիմ գիր լէ հըմալ է գրի»։ Դառցա ընծիկ ընծիկ ասի. «Կանի զէդ ախչիկ լէ առնիմ տեսնամ ինչ կէղնի»։ Ելա առա ղէդ ախչիկ։

Հ՚ըմնօր կէրթենք դաշտ, վար ու ցանք կէնենք, հ՚իրկուն կղառնենք հ՚իգենք, ընծիկ կաշխատենք։

Թե շատ, թե քիչ ժամանակըմ էդ հըմալ աշխատա էդ մարդուն։ Օր մը լէ դաշտ գացեր ենք վար ու ցանք կէնենք, մեկ լէ տեսնամ քանիմ հոգի էկան էնդիեն։

Էկան ասին.— Մարդ աստծո, քելե էրթանք քու կնիկ մեռեր է, ըղքզիկ լէ քու կնկա հետ պիտի հորինք։

Վերցի ասի. «Հեյ վա՞խ, էդ ի՞նչ. պե-փեքատ (անբախտ) մեկըմ իմ էղի, հ՚ըմեն վախտ փորձանք պիտի իմ գլուխ հ՚իգաս։ Հ՚ելա գացի տուն, տեսա օր զավելերմ են դրի քուրվըտիք, աստված ինք նշանց չի տա, իմ կնկա վրեն կիլեն։

Առան էկան տերտեր օր տանեն հորեն։ Տարան, գերեզման չէր, զնդան մ'էր, իմալ էնենք. աստված զիմ գիր հրմալ էր զրի, կապին չվնով հ'իշուցին հ'ոդի։ Մըր հետ քառսուն ավուր լէ հաց ու ջուր դրած են, ըզմդիկ հ'իշուցին հ'ոգի, քանիմ օր մնաց, կուտենք դիմ հաց, կխմենք զիմ ջուր ու կնստենք իշքենք, նը մարգ կեր, նը մատաթ, մու՞թ զնդան մ'էր։

Քանիմ օր մնաց, տեսա օր մեկ լէ զէդ զնդանի բերան բացին. խրռ մեռելըմ ու մարդըմ լէ հ'իշուցին մըր խեչ։

Իշան, իշքի օր մարդն մեռեր էր, կնիկ սաղ էր։ Ասի. «Կնիկ, էկո՞ էդա տեխ քեֆըմ էնինք, աստված օղորմած է, քառսուն ավուր հաց ու ջուր ունինք, հար էդի խըլըսի, աստված դուռըմ կբանա»։ Քանիմ օր մանցի, տեսա գրռբ-գրռբոցըմ կիզեր, մաներ ջանավ-րի դրռբ-գրռբոց, ինչ օր օսկոր ուտեր։ Զէդ գրռբ-գրռբոցի ձեն օր լսի, հ'ելա ձենի հետ գացի, նրֆթ զարկի, տեսա օր աղվեսմ էր։ Բռնի, առա էկա կնկա խեչ, ասի. «Կնիկ, ախըր էդա աղվես լուս աշխարքեն է էկի, հ'ընկի էդա տեխ, էկո թոկըմ թալինք էտոր օտք ու թողինք, բալքիմ ըզմզիկ թալե լուս աշխարք»։ Բերինք թալինք թելըմ էդոր օտք ու մենք լէ բռնեցինք հ'ընկանք էգոր հ'ետև։ Տեխ կա օր հրմալ նեղ է, ինչ օր ասղի օղցան ծկեն հ'ընցնինք, հար կընցնինք, օսկոր չմնա մըր վրեն, տեխ լէ կա, լեն ու բոլ, կսլանք հ'ընցնինք։ Ինչ գլուխդ ցավցում, մեկ լէ տեսանք աղվես զմզիկ լուս աշխարք հանեց դուրս։ Հրմալ տեխըմ հ'ելավ դուրս, օր աստված նշանց չի տա հավորեք չկռնա խրլվրլա, տակ զընար, վերև դնար, օր մարդ հ'ընկնի կէղնի հազար կտոր։

Բերինք աղվըսու աչքեր պագինք ու թողինք, ասինք. «Զէ՞ դու ըզմզիկ հանեցիր լուս աշխարհ, ըստ հաղուն հ'ուր կուզիս գնա, դու գնա քու ճանապարհի հետ»։ Զէն թել օր կապեր ենք աղվըսու օտք, հ'արձկեցի, սորա զաղվես թողի։ Բերի զէդ չվան կապեցի՝ հ'իշավ, հ'իշավ գնարի տակ, ասի. «Կնիկ, մըր չվան հար գնարի տակ կիջ-նի, էկո ղբզիկ կապիմ հ'իշում, վերջ ես լէ կկապիմ մեկ ճոթ զը-նարին, մեկ լէ կբռնիմ կիջնիմ»։ Կապեցի զկնիկ հ'իշուցի, ես լէ քարուն ասըռցուցի ըզմեկ ճոթ, մեկելն առա ձեռքս ի ու հ'իջա։ Թե շատ, թե քիչ էկա, էկա իմ տուն։

Ահմատե Քյամանտար, էդա կնիկ լէ հրմլա բերի։ Էկո, դու կնկա խաբուկ իս, դառձի գնա ետ. Փառե Դաշտեի վրեն ես օր հրմ-լա խվաթով մարդ իմ, չրմ կռնա, դու իսկի չրս կառնա։

Նոր վերցին Ահմատե Քյամանտարն ու էդ Ահլավերդին հաց կերան։

Պառկան քնան. օր լուսուն, հ'ելավ Ահմատե Քյամանտար ճամբու կդներ, ետ դարձուց, ասեց.

— Դարձի դնա քու տուն, կնկա խոսքի հ'ետև մ'հընկնի։

Ահմատե Քյամանտար քիչըմ տեխ օր գնաց, փոշըմնավ, ասեց. «Ես հար հ'ոդա էկեր իմ, վահլայի պիտի էրթամ զէդ Փառե Դաշտեն տեսնամ, տեսնամ ի՞նչ տեսակ մարդ է օր զէդոր անուն հըմլա բատ ու յաման կիտանն։ Դառցավ ու հ'ընկավ ուր ճամբու հետ գնաց։ Թե շատ, թե քիչ գնաց, հ'ըռաստ էկավ մըղարիմ, պառկավ էդոր մեշ, քնավ, ուր էրթացած ճամբախ սար ու յապանի էր, շենլիք, սառայի հ'ըռաստ չէկավ ուրին։

Էդ մըղարի մեջ նստուկ էր, մեկ լէ տեսավ օր, կես գիշեր էր, թափակյոզըմ ճյուղըմ օչխար տվեր է ուր հ'առեջ, առավ էկավ։ Օր տեսավ, զարզանդ բռնեց զինք, ասեց. «Ահլավոքի, կա ու չկա Փառե Դաշտեն օր կասին, էդա է». քաշեց ինք զինք պալում տալտեն, տափավ ու մնաց, զինք հալենք չտվեց։

Էկավ օչխարն էրեց մըղարի մեջ խըլսավ, շըշակըմ զարկեց գետին մորթեց, ըզբուխարիկն վառեց ու էկավ նստավ հ'առեջ օր էփեր ուտեր։ Էդ լէ վերին դին տափեր էր ու մանցի չըր հ'իշխնա ձեն հաներ, տեսավ օր շիշըմ միս շարեց ու էրեց քապապ օր նստեր ուտեր Փառե Դաշտեն։

Կասե ինքն ուրին. «Գոտութեն շատ աղեկ չէ, էդի մինակ պիտի ուտե զէդ քապապ». ու հա՜յ հա՜յ նետվանեղըմ կզարկե, նշան օր կրռնե կզարկե, նետվանեղ դեմ կէրթա քիսի էդոր աչք ու կթափի, քոռնա։

Սըրեն էր, Ահմատե Քյամանտար հ'ուշիկրմ կհ'իշնի ուր տեխեն, կառնե զէտոր քապապն ու կփախնի։

Փառե Դաշտեն ձեռք կիտա աչք, կիշքե տեսնա օր աչք թափեր է, կվերցու, կասե.

— Հողածին, իմ դարդ իմ աչք չէ, իմ դարդ իմ շիշ քապապն է, հեղըմ լուս թըղ հ'իգա աշխարհք, տեսնամ դու իմա՞լ իմ ձեռքեն կփրթնիս հ'ելնիս դուրս։

Ահմատե Քյամանտար մնաց մըղարի մեջ կծկուկ, մեկ քունճրմ։ Փառե Դաշտեն ֆըլրթավ մսի վրեն ու կերավ։

Կուտեր ու վիրա կասեր.— Հողածին, դու թրփրթի հար լուս էղնի, իմ դարդ իմ աչք չէ, իմ շիշ քապապն է, դու իմ ձեռքի միջեն իմա՞լ պիտի ազատիս։

Թափակյոզն է, ըզմիս օր կերավ, խըլրսավ, գնաց շընքըռկավ, ջաղացիմ քար առավ էկավ զարկեց դռան դեմ։

Ասեց. «Կանի ըզդուռ կալում օր էդ մարդ չհ՚ելնի փախնի, լուսուն բռնիմ սպանիմ»։

Մնաց հարի կես գիշեր, քուն չտարավ, վերուց ասեց.

—Հա՜յ, ների, հէսօր դու ըզքու զանգուլակ հ՚որի չըս շըխըռտցու, հ՚իմաց իտաս օր լուս է, բալքիմ թողիմ ըզքզըկ դուրս, բռնիմ զէդ հողածին սպանիմ, իմ աչք քոռցեր է, կը մռմռա, քզիկ ի՞նչ է էղի։

Զէդի լսեց Ահմատե Քյամանտար, ասեց. «Իմ ազատելն օր կա, մեկ լէ էդա ներու ձեռքովն է, թը չէ՝ ճար չկա»։

Հ՚ելավ գտավ ըղներին, բերեց, զարկեց գետին, մորթեց։ Ըղներին օր մորթեց, բերեց ըղներու փոստ քաշեց վըր ուրին ու զանգուլակն շըխըռտցուց։

Թափակյողն օր լսեց զանդուլկի ձենն, ասեց.— Ների, լուս է, հ՚ելնիմ զօչխար թողիմ դուրս օր բռնիմ հողածինն ըսպանիմ։

Հ՚ելավ դռան վրեն, քար տվեց մեկ դին ու ջընքռկավ կանավ դռան հ՚առջև, ասեց. «Զէղնի էդ տղեն փրթնի օչխրի հետ էրթա. պալքիմ բռնիմ»։

Կանավ օր վըր դռան, Ահմատե Քյամանտար չէ՞ ներու փոսթ վըր ուրին էր ղընգռցուց ըզգլուվս հ՚ընկավ օչխըրի հ՚առջև ու հ՚ելավ դուրս, օչխար լէ հ՚ելավ դուրս, քաշվավ կանավ մեկ դին, մեկ լէ տեսավ օր Թափակյողն վերուց ասեց.

— Հե՜յ, հողածին, դու էլ հըմկա իմ ձեռքեն հ՚ու՞ր կաղատիս, չէ՞ օչխար հ՚ելավ դուրս, կանի տես իմալ ըզքար իտամ ծրկու դեմ, բռնիմ զքզիկ սպանիմ։

Հեռի լսողաց մոտեն, Ահմատե Քյամանտար զէդ օր լսեց, վերցուց քֆրեց. «Զքու քոռ աչք ք...., դու զիս հ՚ու՛ր կրռնիս, ես հանդե փրթեր իմ, հ՚ելի դուրս, էկո տեսնանք ի՞նչ կէնիս ընծիկ»։ Ահմատե Քյամանտար օր կասե՝ «էկո տեսնանք ի՞նչ կէնիս ընծիկ»։ Թափակյող ձենի հետ կդիմե, կէրթա օր բռնե սպանե։ Ահմատե Քյամանտար նշանըմ կառնե ու հա՜յ հա՜յ Թափակյոգի ճիկրի մեջ կզարկե։ Զարկելն ու սպանելն մեկ կէղնի։

Կթողե զօչխարն հ՚ոդի ու կհ՚ելնի ճամբաս կիտա հ՚առեջ ու կէրթա։ Մեկ լէ դեմ Փառե Դաշտեի դին կէրթա։ Քիչըմ կէրթա, կտեսնա օր ձիավորրմ զուր ձին խուրղուշունի պես կքշե ու կիդա։

Կասե. «Վահլայի էդա ձիավոր խարապութենի ձիավոր է, օր էկավ զիս կվնասե, կանի նշանըմ բռնիմ, զարկիմ, տեսնամ ի՞նչ դուրս կիգա»։ Ընշան կբռնե, զարկե, զանկուն կիտա դեմ ձիավոր, չառնե, փրսթ կէրթա։ Մեկ լէ օր թաղարուք կտեսնա զարկե, օտք ու ձեռք կկապվին մնան ու ձիավոր կկանի հ՚առջև, կասե.

— Տղա՛, լաո՛, զէն հ՚առջի գըրպ օր զարկիր ընծիկ, արնի հոտ կիզեր ուրնե, էկո զօղորդ խոսա, ի՞նչ ես էրի գու էդա սար։

Տղեն ասեց. «Հեյ վա՛խ, էդ ինչ էր հ՚ելավ իմ գլուխ, արի տես զօղորդն ասիմ, էդ ձիավոր Թափակյոզին բան հ՚իգա՝ զարկե սպանե զիս, չասիմ, մեկ լէ սպանե զիս, թե զօղորդն չասիր»։

Ձիավորն կասե.— Տղա՛, լաո՛, տես, զօղորդն ասես, զօղորդ չասիս ըզքզըկ կսպանիմ։

Ջանդարդի կէղնի, կասի.— Վահլայի, գիշեր հ՚ըռաստ էկա մըղարիմ, տեսա օր Թափակյոզըմ ճյուղըմ օչխար տվեր էր հ՚առեջ, բերեց լցեց էդ մըղարի մեջ։ Քիչըմ մնաց, շիշակըմ զարկեց գետին, մորթեց, օր էներ քապապ, պատվտուկ տեղես զարկի զէտոր աչք հանեցի, հ՚ուշիկմ էկա, առա ըղքապըպի շիշ ձեռքեն, տարա կերա։ Զէդ օր էրի՛, Թափակյոզն ասեց. «Հողեղեն, դու կանի, տես լուսուն իմալ ըզքզիկ սպանիմ»։ Էդոր լէ ներիմ կեր, վիզ զանգուլակըմ կեր կապուկ, լուս օր էղներ, կշըխրոտցըներ, զօչխար կթողեր դուրս. մորթեցի ըզներին, զէդ փոսթ առա վրես, փրթա, հելա դուրս։ Թափակյոզ հասկցավ օր հ՚ելեր իմ դուրս, հ՚ետևես հ՚ընկավ օր սպանե զիս, գարկի ըզնետվանեղ, գնաց առավ ճիկար, սպանվավ։ Թէ էն արնի հոտ էզնի չըմ դինա, էլ չըմ գինա քզիկ լէ բան կիգա՞, չի գա։

Էդ ձիավորն օր զէգի լսեց, ասեց.

— Տղա, քու անուն ի՞նչ է։

Տղեն ասեց.— Ահմատե Քյամանտար։

Ձիավորն ասեց տղին.— Գլխուդ արևուդ խուրպան էղնիմ, Ահմատե Քյամանտար, քզիկ ես բան չըմ ասի, դու հ՚էսօր իմ մըսաֆըրն իս, էրթանք մըր տուն։

Ծբ առան զիրար կէրթեն, ասեց,— Ահմատե Քյամանտար, ես Փառե Դաշտեն իմ, էն օչխար կիշքիս, էնի իմ օչխարն էր, հ՚ըմնօր կիզեր Թափակյոզ կզարկեր տաներ։ Քանի օր իմ հողու մեջն ենք, ես զոր ենք էնդոր վրեն, էնդոր հողու մեջ օր կհ՚ընկներ, էնի զոր էր։

Առան զիրար, գացին տուն։ Ծբ գացին նստան, Փառե Դաշտեն վերցուց ասեց.

— Հա՛յ տղա, քու գլխու դալած ի՞նչ է, իմա՞լ էղեր օր էկեր իս հ՚ընկի էդա դին, էկո՛ ընծիկ խոսա։

Ահմատե Քյամանտար վերուց ասեց.— Փառե Դաշտե, քենև պահիմ, աստծուց ի՞նչ պահիմ, ես հ՚ըմնօր կէրթենք ավուխուշի, հ՚իրիկուն օր կդառնենք հ՚իգենք, կիգենք զիմ կնիկ կանկըցնենք

ղռան դեմ ու նշան կզարկենք քթի խրզմի միջով, կընցուցնենք ու կհարցնենք. «Կնիկ, հ՝իսնե կտրիճ մարդ էլ կա՞ աշխարքի մեջ, ասե, էրթամ վրը էնդոր կռիվ»։ Օրըմ չէ, էրկուս չէ, օր մը լէ էդ հ՝ըմալ օր էրի, վերուց ասեց. «Դու ի՞նչ մարդ իս. կտրիճ օր կա Փառե Դաշտեն է». ասի ես կէրթամ Փառե Դաշտեի վրեն կռիվ։ Ելա կտայի զիմ սիհլաներն ու էկա, էկա քզիկ հ՝ըռաստ։

Փառե Դաշտեն կվերու կասե.— Ահմատե Քյամանտար, դու կնկա խաբուկ իս, էկո դառձի գնա, չէղավ, զէն Թափակյոզին օր սպաներ ես, կէրթամ զէնդոր գլուխն կտրիմ բերիմ, առ գնա քու կնկան, ասե. «ըզՓառե Դաշտեն սպանեցի, կտրի զգլուխն առա էկա»։

Ասեց.— Չէ, ըղքու շապիկ տուր, տանիմ։

— Ահմատե Քյամանտար,— Փառե Դաշտեն ասեց,— մեկ փարա ու հազար շապիկ, հ՝ըմնու աղեկ ըզգլուխ կտրիմ, իտամ տանիս հետդ, օր հեզըմ լէ քու կնիկ ըզքզիկ չճամբե[1] հ՝իդաս։

Հ՝ելավ գնաց, կտրեց Թափակյոզի գլուխն, բերեց տվեց Ահմատե Քյամանտարին։

Ասեց.— Առ ու գնա, տար քու կնկան, ասե թե՝ «Գացի զՓառե Դաշտեն սպանեցի, կտրի զգլուխն առա էկա, չըս հավատա՝ էդա լէ ուր գլուխն է»։

Ահմատե Քյամանտար առավ ըզԹափակյոզի գլուխ, դեմ էկավ. գնաց տուն, կնկա մոտ։

Կնիկն վերուց ասեց. օր տեսավ զէրիկն.— Մարդ,— ասեց,— էդ ի՞նչ իս էղի խարասավդալու հ՝ընկի սարեր, տուն չըս մնա, կօլրրտիս. էկո էդ սավդի թարկ տուր, կախե ղքու գլուխ, քու ապրուստին իշքե։

Ահմատե Քյամանտար հանեց չանթի միչեն գլուխըմ, ասեց.

— Կնիկ, ի՞նչ կասիս, ես պակաս մարդ չիմ, ըշտա քզիկ Փառե Դաշտեի գլուխ. գացի սպանեցի, կտրի ըզգլուխն, առա էկա։

Էդոր վրեն հ՝ելավ թարկ էրեց ավուխուշի էրթալն։ Օր մը ինքն ուրին տուշունմիշ էղավ, ասեց. «Չանըմ, ես ի՞նչ է կէնիմ, ես հ՝որի՞ն իմ հ՝ընկի մարդ սպանելու հ՝ետևեն, կանի զէտոր թարկ պիտի իտամ, կախիմ զիմ գլուխ, իշքիմ իմ դատք ու դատումին, իմ կնիկ աղեկ ասեց»։

Բերեց կախեց զուր սիհլաներ պատեն, ու սկսավ ինքն ուրին աշխատիլ հ՝իրկընընե հ՝իրկուն, հ՝իգալ նստիլ կնկա հետ ուտել ու

---

[1] Բնագրում կճամբե (Ս. Կ.)։

քեֆ ուրախութեան էնել։ Հ՚ոդի էղավ տան ու տեխի տեր, ու ուր կը-նիկ ճժուն իշքեց։

Աստծուց հ՚իշավ իրեք խնձոր՝ մեկ ասողին, մեկ լսողին, մեկն էլ անկաճ էնողին։